ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/01

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Գասպարյանի

Մասնակցությամբ՝

Բողոքաբերի ներկայացուցիչ՝ Մանե Մարտիրոսյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 02.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին հրավերում տեղ գտած անհամապատասխանության համար շտկման հնարավությունը ընձեռելու վերաբերյալ որոշումը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին համապատասխանող և բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը՝ Հայտը հրավերի պահանջների չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

3. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած Մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը և 7-րդ կետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ծանուցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

4. Թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող և արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր»:

Բողոքներ քննող անձի կողմից 17.04.2019թ. բողոքն ընդունվել է վարույթ և 22.04.2019թ. նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 30.04.2019թ. և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.05.2019թ.:

2. <u>«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Բողոքաբերը բողոքով հայտնել է հետևյալը.

««Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն /այսուհետ՝ Ընկերություն/ ուսումնասիրելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրերով Հրավերով /այսուհետ՝ Հրավեր/ գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն 3/ և 29.03.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությունը /այսուհետ՝ Արձանագրություն 4/, գտնում է, որ դրանք կայացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ Օրենք/, Հրավեր մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

1. Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագրերը և առարկան.

Ծածկագիր՝ թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19»

Գնման առարկա՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերում:

Պատվիրատու՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ /հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր/:

2. Վեճի առարկան, բողոքի փաստացի և իրավական հիմքերն ու բողոքաբերի պահանջը.

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»:

Հրավերի II մասի Գնանշման հարցման հայտը պատրաստելու Հրահանգի 3.3. կետի համաձայն՝ «Սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ»:

Հրավերի ցանկացած հավելվածի համար սահմանված է Մասնակից անձի փաստաթղթերի ստորագրման համար նվազագույնը սահմանված պահանջները, այն է՝ ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. Լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար:

Նույն հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ «Իրավաբանական անձի անունից լիազորագիրը տրվում է նրա ղեկավարի կամ դրա համար նրա կանոնադրությամբ լիազորված մեկ այլ անձի ստորագրությամբ»:

Օրենքի 30 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի

պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով, Արձանագրություն 3-ի 7-րդ կետի համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի /այսուհետ՝ Կազմակերպություն/ կողմից ներկայացված հայտը չի դիտարկվել բավարար, քանի որ հայտը ներկայացվել է Արմինե Բաղալյանի կողմից, սակայն հայտին կցված չի եղել վերջինիս նման լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթ, Հավելված 2.1.-ում նշված չի եղել իրական շահառուի հայրանունը:

Այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովը Կազմակերպության հայտը դիտարկելով Հրավերով սահմանված պայմաններին համապատասխան չկազմված՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, հնարավորություն է ընձեռել Կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը՝ Կազմակերպության հայտը մերժելու փոխարեն:

Ավելին, Արձանագրություն 4-ի 6-րդ կետի համաձայն՝ Կազմակերպությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և առաջարկվել է ներկայացնել հրավերով սահմանված չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ստացվում է, եթե գնահատող հանձնաժողովը գործեր վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին համապատասխան, ապա պետք է մերժեր Կազմակերպության կողմից ներկայացված հայտը, որն ըստ էության ներկայացվել է Հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող վիճակում, նման լիազորություն չունեցող անձի կողմից, ինչի արդյունքում 1-ին տեղ կզբաղեցներ Ընկերությունը, որն, ըստ օրենքի խախտմամբ կազմված Արձանագրությունների, զբաղեցրել է 2-րդ տեղը:

Ստացվում է, որ Հանձնաժողովը թիվ 4 Արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Կազմակերպության հայտը բավարար գնահատելով, գործել է ոչ իրավաչափ և խախտել է Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, որն ամիջականորեն հանգեցրել է Ընկերության օրինական շահերի և իրավունքների խախտմանը, քանի որ վերջինս զրկվել է Օրենքի պահանջներին համապատասխան 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու օրինական հնարավորությունից:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ՝ պայմանագիրն անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Միաժամանակ, նշենք նաև, որ 15.03.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ԷՍ-2019/49 որոշմամբ իրավական գնահատական է տրվել սույն բողոքում արծարծված լիազորագրին վերաբերող համանման խնդրին, ուստի գտնում ենք նաև, որ այն կարող է որպես նախադեպային որոշում կիրառվել սույն իրավահարաբերության կարգավորման գործընթացում:

Այսպիսով, ղեկավարվելով վերոթվարկյալ իրավական հիմնավորումներով, խնդրում ենք.

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 26.03.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 7-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին

հրավերում տեղ գտած անհամապատասխանության համար շտկման հնարավությունը ընձեռելու վերաբերյալ որոշումը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը Հրավերի պահանջներին համապատասխանող և բավարար գնահատելու վերաբերյալ կայացված որոշումը՝ Հայտը հրավերի պահանջների չհամապատասխանելու և այն մերժման ենթակա լինելու հիմքով:

3. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի 29.03.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6-րդ կետով կայացված՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին առաջին տեղ զբաղեցրած Մասնակից ճանաչելու վերաբերյալ կայացված որոշումը և 7-րդ կետով՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ծանուցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը և այդ որոշումից բխող այլ որոշումները:

4. Թիվ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ճանաչել հաղթող և արգելել վերջինիս հետ կնքել պայմանագիր»:

3. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 02.04.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է գրավոր դիրքորոշում, հետևյալի մասին.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից ս/թ մարտի 19-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,

որով կայանի կարիքների համար ձեռք են բերվելու «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայություններ:

Հայտերի ներկայացման համար սահմանված վերջնաժամկետին ներկայացվել են հայտեր՝ հետևյալ կազմակերպությունների կողմից՝ «Արմենիա Ինշուրանս» ԱՓԲԸ, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ, «ՌԵՍՈ» ԱՓԲԸ, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ:

Հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, հայտը ստորագրվել էր Արմինե Բադալյանի կողմից, սակայն հայտին կցված չէր վերջինիս նման լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթ, Հավելված 2. 1-ում նշված չէր իրական շահառուի հայրանունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ, ինչը բացակայում էր «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտում:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04. 05. 2017թ. որոշման 41-րդ կետի պահանջներով, ըստ որի եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, ինչի արդյունքում հայտը գնահատվեց բավարար և մասնկիցը ճանաչվեց առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Բողոքն անհիմն է, քանի որ արձանագրված անհամապատասխանությունները չեն վերաբերվել գնային առաջարկին կամ հայտի ապահովմանը, իսկ ՀՀ կառավարության թիվ 526-Ն առ 04. 05. 2017թ. որոշման 41-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ գնային առաջարկի կամ հայտի ապահովման բացակայության, կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացման, ենթակա են շտկման:

Բողոքաբեր անձի կողմից որպես նախադեպային որոշում ներկայացված գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ՍՑ-ԷՍ-2019/49 առ 15. 03. 2019թ. որոշմամբ իրավական գնահատական է տրվել լիազորագրին վերաբերող այլ խնդրի, որը չի կարող նախադեպային հանդիսանալ»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2019/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 02.04.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է ամբողջությամբ մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ ... գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 30-րդ հոդվածի՝

-1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

- 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

-1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ նաև Հրավեր) II մասի հայտը պատրաստելու հրահանգի 3.3. կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Հրավերի 7. 9 կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար աշխատակիցների բժշկական ապահովագրության ծառայություններ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվս այլոց, մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 26.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտը ստորագրվել էր Արմինե Բադալյանի կողմից, սակայն հայտին կցված չէր վերջինիս նման լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթ, Հավելված 2. 1-ում նշված չէր իրական շահառուի հայրանունը:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բաղալյանին էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր վավերացնելու իրավունք վերապահելու վերաբերյալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի 06. 03. 2019թ. թիվ 262-Ա հրամանը, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Մասնավորապես, վերոհիշյալ հրամանով 2019թ. մարտի 6-ից անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բաղալյանին վերապահվել է լիազորություն՝ պետական գնումների ընթացակարգերին մասնակցելու ժամանակ Ընկերության անունից ներկայացվող փաստաթղթերը վավերացնելու նպատակով:

Իսկ արդեն 29.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետով Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, ինչի արդյունքում վերջինիս հայտը գնահատվել է բավարար:

Նույն արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 31,995,000 ՀՀ դրամ, իսկ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդհանուր գնային առաջարկը՝ 27,000,000 ՀՀ դրամ, որով Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Բողոքներ քննող անձն արձանագրում է հետևյալը.

1. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), 26.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հայտը ստորագրվել էր Արմինե Բաղալյանի կողմից, սակայն հայտին կցված չէր վերջինիս նման լիազորություն վերապահված լինելու մասին փաստաթուղթ, Հավելված 2. 1-ում նշված չէր իրական շահառուի հայրանունը:

2. Հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը:

3. Սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից Հանձնաժողովին է ներկայացվել «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բաղալյանին

էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր վավերացնելու իրավունք վերապահելու վերաբերյալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի 06. 03. 2019թ. թիվ 262-Ա հրամանը, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Նույն հրամանով 2019թ. մարտի 6-ից անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բաղալյանին վերապահվել է լիազորություն՝ պետական գնումների ընթացակարգերին մասնակցելու ժամանակ Ընկերության անունից ներկայացվող փաստաթղթերը վավերացնելու նպատակով:

4. Հանձնաժողովն արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից շտկվել է անհամապատասխանությունը, ինչի արդյունքում վերջինիս հայտը Հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

5. Ընթացակարգի շրջանակներում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի ընդհանուր գնային առաջարկը եղել է նվազագույնը, և կազմել է 27,000,000 ՀՀ դրամ, որով Ընկերությունը ճանաչվել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը՝ մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնելով և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին հայտում տեղ գտած անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն ընձեռելով՝ ելել է Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի դրույթից, որով մասնավորապես սահմանվել է, որ մասնակցի հայտն ի թիվս այլոց ներառում է մասնակցի հաստատած՝ ***հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ)***: Միաժամանակ, Հրավերի 3.3. կետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա ***հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ***:

Նկատի ունենալով, որ Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն վերաբերել մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկին կամ հայտի ապահովմանը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ տվյալ դեպքում, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ մասնակցի կազմված

փաստաթղթերը վերջինիս լիազորված անձի կողմից ստորագրելու լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթի բացակայությունը, ենթակա է շտկման:

Իսկ ինչ վերաբերում է բողոքաբերի՝ սահմանված ժամկետում «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի կողմից Հանձնաժողովին ներկայացրած «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բաղալյանի էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր վավերացնելու իրավունք վերապահելու վերաբերյալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի 06.03.2019թ. թիվ 262-Ա հրամանի վերաբերյալ արված փաստարկներին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք անհիմն են, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսնգրքի 321-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիազորագիր է համարվում գրավոր լիազորությունը, որն անձը տալիս է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար: Ներկայացվողը ներկայացուցչի կողմից գործարքներ կնքելու համար գրավոր լիազորություն կարող է անմիջականորեն տալ համապատասխան երրորդ անձին:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաաձայն՝ անհատական աշխատանքային հարաբերությունները կարգավորելու նպատակով գործատուն ընդունում է անհատական իրավական ակտեր: Գործատուի ընդունած ներքին և անհատական իրավական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտի մասին համապատասխան անձանց պատշաճ կարգով իրազեկելու պահից, եթե այդ իրավական ակտերով այլ ժամկետ նախատեսված չէ: Աշխատանքի ընդունման, ինչպես նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու մասին անհատական իրավական ակտի մեկ օրինակը հանձնվում է աշխատողին այն ընդունելուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

Վերոնշյալ իրավական նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրեն Գագիկ Գրիգորյանի 06.03.2019թ. թիվ 262-Ա հրամանը չի հանդիսանում անհատական աշխատանքային հարաբերություններ կարգավորելու նպատակով գործատուի ընդունած անհատական իրավական ակտ, այլ իր էությամբ ու բովանդակությամբ հանդիսանում է գրավոր լիազորություն, որն անձը տվել է այլ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացվելու համար, քանի որ վերոհիշյալ հրամանով 2019թ. մարտի 6-ից անձնական ապահովագրության գծով վաճառքների բաժնի ղեկավար Արմինե Բաղալյանին վերապահվել է լիազորություն՝ պետական գնումների

ընթացակարգերին մասնակցելու ժամանակ Ընկերության անունից ներկայացվող փաստաթղթերը վավերացնելու նպատակով:

Այսպիսով, էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր վավերացնելու իրավունք վերապահելու վերաբերյալ փաստաթուղթը Հանձնաժողովի կողմից իրավաչափորեն դիտվել է որպես Հրավերով նախատեսված, սակայն մասնակցի կողմից հայտով չներկայացված փաստաթուղթ, ուստի Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված իմպերատիվ պահանջը՝ որոշել է նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, հնարավորություն տալով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին շտկել հայտում տեղ գտած անհամապատասխանությունը՝ ներկայացնելով Արմինե Բադալյանին էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր վավերացնելու իրավունք վերապահելու վերաբերյալ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի գործադիր տնօրենի կողմից հաստատված փաստաթուղթը:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-16/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲ ընկերությանը հայտում տեղ գտած անհամապատասխանության համար շտկման հնարավություն ընձեռելու վերաբերյալ որոշում ընդունելով՝ գործել է իրավաչափ՝ ապահովելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջի կատարումը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 02.04.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ